

**«ԴԱՍԱ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2018թ. նոյեմբերի 9-ից 2019թ. մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կողմից իրականացվել է «ԴասԱ» ծրագիրը:

Նշված ժամանակահատվածում կատարվել են այցեր հետևյալ 16 դպրոցներ՝ Երևանի թիվ 170, 189, 94, 118, 184, 42, 114, 105, 112, 190, 54, 198, 62, ՀԱԱՀ, ՀՊՄՀ, ԵՃՇՊՀ ավագ դպրոցներ: Այս դպրոցների աշակերտները մասնակցել են հանդիպումներին հաջորդող համերգներին Արամ Խաչատրյան համերգասրահում:

Հետևյալ 19 ավագ դպրոցների աշակերտները Արամ Խաչատրյան համերգասրահում ներկա են գտնվել համերգ-հանդիպումների՝ Երևանի թիվ 109, 195, 148, 16, 127, 29, 97, 119, 46, 139, 142, 159, 46, 115, 83, 29, 182, ԵՊԲՀ և ՀԱՊՀ ավագ դպրոցներ:

Ընդհանուր առմամբ տեղի է ունեցել 18 համերգ, այդ թվում՝ «ԴասԱ» գալահամերգը:

Դպրոցներում և համերգասրահում տեղի ունեցած հանդիպումները վարել են Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը, նվագախմբի երաժիշտներ, ինչպես նաև համերգներին հրավիրված աշխարհահռչակ երաժիշտներ՝ Համիկ Պապյան, Ալեքսանդր Ռոմանովսկի, Վալենտինա Բաբոր, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ՝ գեղարվեստական ղեկավար Հովհաննես Չեքիջյանի գլխավորությամբ:

Ծրագիրը նշված փուլում ներառել է 13303 աշակերտի (աշակերտների քանակը ճշգրտվել է դպրոցներից):

Բոլոր դպրոցներին ընդհանուր առմամբ տրամադրվել է 13950 տոմս: Տրամադրվող տոմսերի քանակը հաշվարկվել է՝ ըստ դպրոցի աշակերտների և դասուցների քանակի՝ որպես աշակերտների ուղեկցողների:

Հանդիպումների բովանդակությունը մշակվել է ծրագիրն իրականացնող թիմի կողմից աշակերտներին դասական երաժշտությանը ծանոթացնելու և առաջիկա համերգի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու նպատակով: Հատուկ ծրագրի շրջանակներում նախապատրաստվել են ճանաչողական, երաժշտական տեսանյութեր ներկայացվող նյութն ու առաջիկա համերգն ավելի մատչելի դարձնելու, աշակերտների մոտ համերգի ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելու ունակության զարգացման համար:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է «ԴասԱ»-ի բրենդինգ, որին համապատասխան պատրաստվել են տպագրական և թվային նյութեր՝ նախատեսված մարքեթինգային արշավներում և ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների ժամանակ կիրառելու համար:

Այդ արշավների շրջանակները մեծացնելու համար աշխատել է բլոգերից բաղկացած թվային մարքեթինգի թիմը, որն աշխատանքներ է իրականացրել հիմնականում «Ֆեյսբուք» և «Ինստագրամ» սոցիալական ցանցերում, ինչպես նաև ինտերակտիվ ծրագրի բովանդակության համալրման ուղղությամբ:

- ԴասԱ ֆեյսբուքյան էջի հետևորդների թիվն է՝ 10240, ինչը կազմում է ծրագրին մասնակցած աշակերտների մոտ 77%-ը:
- ԴասԱ ինստագրամյան էջի հետևորդների թիվը՝ 1309:

Ծրագիրը լուսաբանվել է հայկական և միջազգային լրատվամիջոցներում: Ընդհանուր առմամբ ծրագիրը մեդիայում ստացել է 90-ից ավելի արձագանք:

ԴասԱ-ին անդրադարձ է կատարել բրիտանական Rhinegold պարբերականը: Նյութը կարելի է կարդալ հետևյալ հղմամբ՝ <https://www.rhinegold.co.uk/classical-music/classical-music-for-teenagers-in-armenia/>

«ԴասԱ» ծրագրի շրջանակներում պատրաստվել է նույնանուն բջջային հավելված, որն ապահովում է ծրագրի ինտերակտիվությունը: Հավելվածի օգնությամբ մասնակիցները կարողանում են թվային տարբերակով ամրագրել իրենց տոմսերը, ինչպես նաև անվճար ընտրել հետագա համերգները, որոնք ցանկանում են ունենդրել:

Հավելվածը համալրված է դասական երաժշտության վերաբերյալ հետաքրքիր և օգտակար տեղեկատվությամբ: Աշակերտները ակտիվորեն մասնակցում են վիկտորինաներին, մեկնաբանում և գնահատում համերգները, որոնց ներկա են գտնվում:

Հավելվածը կարելի է ներբեռնել հետևյալ հղումներով՝

<https://play.google.com/store/apps/details?id=com.codics.dasa&hl=en>

[https://itunes.apple.com/am/app/dasa-id1441568804?mt=8&fbclid=IwAR3ZXF6cjRxogt5vuWzxl-UhguXzSpbTzc4zA0QmQDpHyffyGOaoWOZ1YCI](https://itunes.apple.com/am/app/dasa/id1441568804?mt=8&fbclid=IwAR3ZXF6cjRxogt5vuWzxl-UhguXzSpbTzc4zA0QmQDpHyffyGOaoWOZ1YCI)

Ծրագրին մասնակցելուց հետո մոտ 1600 աշակերտ վերադարձել է համերգասրահ, ինչը կազմում է ծրագրին մասնակցած աշակերտների 12%-ը:

«ԴասԱ» ծրագրի առաջին փուլի ավարտից անմիջապես հետո՝ մայիսի 23-ին, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի նախածեռնությամբ իրականացվել է ԴասԱ գալահամերգը, որին մասնակցել է 1200-ից ավելի աշակերտ:

Հավելենք, որ «ԴասԱ» գալահամերգը մոտ 80 արձագանք է ստացել հավելվածում:

Մայիսի 28-31-ն ընկած ժամանակահատվածում ՀՊՄՆ «Օտրի տրիո» եռյակը, «ԴասԱ» ծրագրի համակարգող թիմի ուղեկցությամբ, համերգ-հանդիպումներով հանդես է եկել Հայաստանի 5 մարզում՝ Կոտայք, Գեղարքունիք, Տավուշ, Աշտարակ, Արմավիր: Ընդհանուր առմամբ հանդիպումներին մասնակցել է մոտ 400 աշակերտ:

Հունիսի 1-ին ՀՊՄՆ-ը կազմակերպեց մամուլի ասուլիս՝ ծրագրի առաջին փուլի արդյունքներն ամփոփելու նպատակով, որին ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր և գեղարվեստական ղեկավար Սերգեյ Սմբատյանը և մոտ 60 աշակերտ Երևանի և մարզերի տարբեր դպրոցներից: Վերջիններս պատմեցին ծրագրից իրենց տպավորությունների մասին, ինչպես նաև հանդես եկան առաջարկներով:

Հաշվի առվելով ծրագրի ակտիվությունը և մեծ արձագանքը աշակերտների շրջանում՝ Խաչատրյանի միջազգային մրցույթի բացման և փակման համերգները (հունիսի 6, հունիսի 14), դիրիժոր Յուրի Դավթյանի 90-ամյակին նվիրված (հուլիսի 3) և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգաշրջանի փակման (հուլիսի 9) համերգները ևս ներառվել են ծրագրի շրջանակներում: Արդյունքում՝ 200-ից ավելի աշակերտ վերադարձել է համերգասրահ: